**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ**
**ՊԱՏԳԱՄԱՎՈՐ**

---

**28.11.2023թ.**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**
**ՊԱՐՈՆ ԱԼԵՆ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ**

**Հարգելի՛ պարոն Սիմոնյան,**

Ղեկավարվելով Սահմանադրության 109-րդ հոդվածի 1-ին մասով և «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 67-րդ հոդվածի 1-ին մասով՝ Ազգային ժողովի քննարկմանն ենք ներկայացնում «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» սահմանադրական օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին»,«Հանրաքվեի մասին» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», սահմանադրական օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Տեղական հանրաքվեի մասին» օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթը, որի հիմնական զեկուցողը պատգամավոր Արփինե Դավոյանն է:

Ազգային ժողովի աշխատակարգի 25-րդ կետի համաձայն՝ գրությանը կից ներկայացնում ենք առաջադրվող նախագծերի փաթեթը, օրենքների ընդունման հիմնավորումը, գործող օրենքների փոփոխվող հոդվածների մասին տեղեկանքները:

Խնդրում ենք ներկայացված նախագծերի փաթեթը սահմանված կարգով դնել շրջանառության մեջ:

**Պատգամավորներ՝** ԱՐՓԻՆԵ ԴԱՎՈՅԱՆ

ԱՆՈՒՇ ՔԼՈՅԱՆ

ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԸ

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

**Հոդված 1.** 2016 թվականի մայիսի 25-ի «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 144-րդ հոդվածի 18-րդ մասում «Մինչև 2024 թվականի» բառերը և թիվը փոխարինել «Մինչև 2025 թվականի» բառերով և թվով:

**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

## ՏԵՂԵԿԱՆՔ

**(Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքում փոփոխություն նախատեսող սահմանադրական օրենքի նախագծի վերաբերյալ)**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2016 թվականի մայիսի 25-ին

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ
**(սահմանադրական օրենք)**

**Հոդված 144. Անցումային և եզրափակիչ դրույթներ**

1. Սույն օրենսգիրքն ուժի մեջ է մտնում 2016 թվականի հունիսի 1-ից:

2. Սույն օրենսգիրքն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած է ճանաչվում 2011 թվականի մայիսի 26-ին ընդունված Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրքը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքերի:

3. Մինչև 2017 թվականի սեպտեմբերի 1-ը նշանակվող՝ համայնքի ղեկավարի և ավագանու անդամների ընտրությունները կազմակերպվում և անցկացվում են 2011 թվականի մայիսի 26-ի Ընտրական օրենսգրքի կանոնակարգումներին համապատասխան, բացառությամբ համայնքի ղեկավարի և ավագանու անդամի ընտրությունների ժամանակ ընտրելու և ընտրվելու իրավունքը սահմանող դրույթների, որը կարգավորվում է սույն օրենսգրքով սահմանված դրույթներին համապատասխան:

Սույն օրենսգիրքն ուժի մեջ մտնելուց հետո Գյումրի և Վանաձոր համայնքներում անցկացվում են ավագանու ընտրություններ՝ սույն օրենսգրքով նախատեսված համամասնական ընտրակարգով, իսկ համայնքի ղեկավարի և ավագանու անդամի ընտրություններ չեն անցկացվում: Մինչև 2017 թվականի սեպտեմբերի 1-ը Գյումրի և Վանաձոր համայնքներում նշանակվող ավագանու ընտրությունների քվեարկությունը կազմակերպվում և անցկացվում, իսկ ընտրությունների արդյունքներն ամփոփվում են 2011 թվականի մայիսի 26-ի Ընտրական օրենսգրքի՝ Երևանի ավագանու ընտրության համար սահմանված կանոնակարգումներին համապատասխան՝ ընտրատարածքային (տարածքային) ընտրական հանձնաժողովների կողմից:

Մինչև 2017 թվականի սեպտեմբերի 1-ը Գյումրու, Վանաձորի ավագանիների, ինչպես նաև համայնքի ղեկավարի և ավագանու անդամի ընտրությունների ժամանակ ընտրողների ցուցակները կազմվում են 2011 թվականի մայիսի 26-ի Ընտրական օրենսգրքի՝ ընտրողների ցուցակներին ներկայացվող պահանջներին համապատասխան, որոնցում ընդգրկվում են սույն օրենսգրքով սահմանված՝

տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ ընտրելու իրավունք ունեցող անձինք:

Գյումրու, Վանաձորի ավագանիների, համայնքի ղեկավարի և ավագանու անդամների ընտրություններին դիտորդական առաքելություն իրականացնող հասարակական կազմակերպությունների հավատարմագրումն իրականացվում է 2011 թվականի մայիսի 26-ի Ընտրական օրենսգրքի դրույթներին համապատասխան: Դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպությունների դիտորդներից որակավորման վկայականներ չեն պահանջվում, իսկ սույն օրենսգրքի 31-րդ հոդվածի 8-րդ մասով սահմանված պահանջը գործում է 2017 թվականի հունվարի 1-ից:

Մինչև 2017 թվականի սեպտեմբերի 1-ը Կենտրոնական ընտրական հանձնաժողովը կարող է որոշում կայացնել առանձին համայնքներում տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների քվեարկությունը սույն օրենսգրքի կանոնակարգումներին համապատասխան կազմակերպելու և անցկացնելու մասին՝ որպես փորձարարական ծրագիր: Փորձարարական ծրագրի իրականացմամբ պայմանավորված՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովն իրավասու է փոխելու տեղական ինքնակառավարման մարմնի քվեարկության օրը՝ նշանակելով նոր օր:

4. Մինչև սույն օրենսգիրքն ուժի մեջ մտնելը գործող կենտրոնական և ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներն իրենց լիազորություններն իրականացնում են մինչև համապատասխանաբար կենտրոնական և տարածքային ընտրական հանձնաժողովների՝ սույն օրենսգրքով նախատեսված կարգով կազմավորումից հետո առաջին նիստի գումարման օրը:

Եթե Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որևէ անդամի լիազորությունների ժամկետն ավարտվում է սույն օրենսգիրքն ուժի մեջ մտնելուց հետո՝ մինչև նոր Կենտրոնական ընտրական հանձնաժողովի ձևավորումը, ապա այդ անդամները շարունակում են պաշտոնավարելը մինչև նոր Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կազմավորումը:

5. Կենտրոնական ընտրական հանձնաժողովը պետք է կազմավորվի մինչև 2016 թվականի նոյեմբերի 1-ը:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի առաջին նիստը կայանում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կազմավորումից հետո՝ երրորդ աշխատանքային օրը՝ ժամը 12.00-ին: Կենտրոնական ընտրական հանձնաժողովը համարվում է կազմավորված՝ հանձնաժողովի կազմի 2/3-ի ընտրվելուց հետո:

6. Կենտրոնական ընտրական հանձնաժողովը մինչև 2016 թվականի դեկտեմբերի 1-ը սահմանում է տարածքային ընտրական հանձնաժողովների սպասարկման տարածքները, տարածքային ընտրական հանձնաժողովների նստավայրերը և համարները: Տարածքային ընտրական հանձնաժողովները կազմավորվում են տարածքային ընտրական հանձնաժողովների սպասարկման տարածքները և տարածքային ընտրական հանձնաժողովների նստավայրերը սահմանելուց հետո՝ 21-օրյա ժամկետում: Տարածքային ընտրական հանձնաժողովների առաջին նիստերը նշանակում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովը:

7. Սույն օրենսգրքի 42-րդ հոդվածի 6-րդ մասն ուժի մեջ է մտնում նորընտիր Հանրապետության նախագահի լիազորությունների ստանձնման պահից:

8. Սույն օրենսգիրքն ուժի մեջ մտնելուց հետո մինչև նոր Ազգային ժողովի ընտրությունը սույն օրենսգրքի 44-րդ հոդվածի 5-րդ մասում որպես Ազգային ժողովի պատգամավորների մանդատների թիվ ընդունվում է 90-ը, իսկ որպես Ազգային ժողովի կուսակցության ստացած մանդատների թիվ ընդունվում է Ազգային ժողովի համամասնական ընտրակարգով կուսակցության ստացած մանդատների թիվը:

9. Սույն օրենսգրքի 97-րդ և 98-րդ հոդվածներով սահմանված պահանջը՝ վարչապետի թեկնածուի վերաբերյալ համաձայնության գալու և ներկայացնելու վերաբերյալ, ուժի մեջ է մտնում նորընտիր Հանրապետության նախագահի կողմից իր պաշտոնի ստանձնման պահից:

10. Սույն օրենսգիրքն ուժի մեջ մտնելուց հետո մինչև նոր Ազգային ժողովի ընտրությունն Ազգային ժողովի համամասնական ընտրակարգով ընտրված և լիազորությունները վաղաժամկետ դադարած պատգամավորի մանդատը Կենտրոնական ընտրական հանձնաժողովի արձանագրությամբ այդ մասին հանձնաժողովին իրազեկելուց հետո՝ մեկշաբաթյա ժամկետում, տրվում է այդ կուսակցության ընտրական ցուցակի հերթական հաջորդ թեկնածուին: Եթե ընտրական ցուցակում այլ թեկնածու չկա, ապա մանդատը մնում է թափուր:

11. Սույն օրենսգիրքն ուժի մեջ մտնելուց հետո մինչև նոր Ազգային ժողովի ընտրությունն Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով ընտրված և լիազորությունները վաղաժամկետ դադարած պատգամավորի մանդատը մնում է թափուր:

12. Սույն օրենսգիրքն ուժի մեջ մտնելուց հետո Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նորմատիվ որոշումները գործում են այնքանով, որքանով չեն հակասում սույն օրենսգրքին:

13. 2011 թվականի մայիսի 26-ին ընդունված Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքին համապատասխան՝ ստուգարքի հիման վրա տրված ընտրական հանձնաժողովում ընդգրկվելու որակավորման և դիտորդական առաքելություն իրականացնելու վկայականները համարվում են անվավեր 2016 թվականի դեկտեմբերի 31-ից:

14. Մինչև 2021 թվականի հունվարի 1-ը Ազգային ժողովի, համամասնական ընտրակարգով անցկացվող համայնքների ավագանիների ընտրությունների ժամանակ կուսակցության, կուսակցությունների դաշինքի և դաշինքում ընդգրկված կուսակցություններից յուրաքանչյուրի համապետական ընտրական ցուցակի առաջին մասում 1-ին համարից սկսած՝ ցանկացած ամբողջ թվով քառյակներում (1-4, 1-8, 1-12 և այդպես շարունակ՝ մինչև ցուցակի ավարտը) յուրաքանչյուր սեռի ներկայացուցիչների թիվը չպետք է գերազանցի 75 տոկոսը, իսկ ընտրություններին մասնակցող կուսակցության (կուսակցությունների դաշինքի) տարածքային ընտրական ցուցակում յուրաքանչյուր սեռի ներկայացուցիչների թիվը չպետք է գերազանցի 75 տոկոսը:

15. Մինչև 2021 թվականի հունվարի 1-ը Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ համապետական ընտրական ցուցակի առաջին մասից մանդատից հրաժարված կամ պատգամավոր ընտրված և լիազորությունները վաղաժամկետ դադարած պատգամավորի մանդատը Կենտրոնական ընտրական հանձնաժողովի արձանագրությամբ այդ մասին հանձնաժողովին իրազեկելուց հետո՝ մեկշաբաթյա ժամկետում, տրվում է այդ կուսակցության համապետական ընտրական ցուցակի առաջին մասի հերթական հաջորդ թեկնածուին, իսկ եթե դրա արդյունքում տվյալ

խմբակցության որևէ սեռի ներկայացուցիչների թիվը նվազում է և արդյունքում ցածր է լինելու 20 տոկոսից, ապա տրվում է այդ կուսակցության համապետական ընտրական ցուցակի առաջին մասի նվազ ներկայացված սեռի հաջորդ թեկնածուին, եթե կա:

16. Մինչև 2021 թվականի հունվարի 1-ը համամասնական ընտրակարգով անցկացվող համայնքների ավագանիների ընտրությունների ժամանակ մանդատից հրաժարված կամ ընտրված և լիազորությունները վաղաժամկետ դադարած ավագանու անդամի մանդատը համապատասխան ընտրական հանձնաժողովի արձանագրությամբ այդ մասին հանձնաժողովին իրազեկելուց հետո՝ մեկշաբաթյա ժամկետում, տրվում է այդ կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակի հերթական հաջորդ թեկնածուին, իսկ եթե դրա արդյունքում տվյալ խմբակցության որևէ սեռի ներկայացուցիչների թիվը նվազում է և արդյունքում ցածր է լինելու 20 տոկոսից, ապա տրվում է այդ կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակի նվազ ներկայացված սեռի հաջորդ թեկնածուին, եթե կա:

17. Սույն օրենսգրքով դատավորի համար սահմանված նորմերը տարածվում են նաև սահմանադրական դատարանի անդամների վրա:

18. ~~Մինչև 2024 թվականի~~ Մինչև 2025 թվականի հունվարի 1-ը՝

1) սույն օրենսգրքի 26-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված լիազորությունն իրականացնում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովը.

2) սույն օրենսգրքի 26-րդ հոդվածի 7-րդ մասում նշված տեղեկանքը շարունակում է ներկայացվել վերահսկիչ-վերստուգիչ ծառայություն, իսկ թեկնածուների, ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) նախընտրական հիմնադրամների ֆինանսական մուտքերի և ելքերի վերաբերյալ տվյալների ամփոփումը, ամփոփ տեղեկանքի կազմումը և Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում տեղադրելն իրականացնում է վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունը.

3) սույն օրենսգրքի 27-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված վարչական վարույթ հարուցելու լիազորությունն իրականացնում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովը: Վարչական վարույթը հարուցվում է, եթե վերահսկիչ-վերստուգիչ ծառայության եզրակացությամբ նշվում է, որ նախընտրական քարոզչության համար ձեռք բերված ապրանքը, կատարված աշխատանքը կամ մատուցված ծառայությունը շուկայական արժեքով չեն ներառվել նախընտրական հիմնադրամի ծախսերում.

4) սույն օրենսգրքի 27-րդ հոդվածի 8-րդ մասով նախատեսված լիազորությունն իրականացնում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովը.

5) սույն օրենսգրքի 28-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված հայտարարագրերը տեղադրվում են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում:

***(144-րդ հոդվածը լրաց., փոփ. 30.06.16 ՀՕ-119-Ն, փոփ. 18.06.20 ՀՕ-333-Ն, լրաց. 24.11.22 ՀՕ-442-Ն)***

***(18.06.20 ՀՕ-333-Ն օրենքն ունի անցումային դրույթ)***

ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԸ

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2021 թվականի մայիսի 7-ի ՀՕ-202-Ն սահմանադրական օրենքի 104-րդ հոդվածի 7-10-րդ մասերում «2024 թվականի» թվերը և բառերը փոխարինել «2025 թվականի» թվերով և բառերով:

**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

## ՏԵՂԵԿԱՆՔ

**(«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքում» փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» սահմանադրական օրենքում փոփոխություններ նախատեսող սահմանադրական օրենքի նախագծի վերաբերյալ)**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

## Ս Ա Հ Մ Ա Ն Ա Դ Ր Ա Կ Ա Ն  Օ Ր Ե Ն Ք Ը

**Ընդունված է 2021 թվականի մայիսի 7-ին**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 104. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ**

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2022 թվականի հունվարի 1-ից, բացառությամբ սույն հոդվածով նախատեսված դրույթների:

2. Սույն օրենքի 67-71-րդ հոդվածները, 72-րդ հոդվածի 1-ին մասը և 73-րդ հոդվածն ուժի մեջ են մտնում Ազգային ժողովի հաջորդ հերթական ընտրությունների նշանակման օրվանից:

3. Սույն օրենքի 1-ին հոդվածի 2-րդ կետը, 2-րդ հոդվածի 4-րդ կետը, 45-րդ հոդվածի 2-րդ կետը, 75-րդ հոդվածը, 82-րդ հոդվածի 2-րդ մասը, 83-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերը, 84-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերը, 85-րդ հոդվածի 2-րդ մասը, 89-րդ հոդվածը, 91-րդ հոդվածը, 92-րդ հոդվածի 2-րդ մասը, 94-97-րդ հոդվածները, 98-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ մասերը, 99-րդ հոդվածը, 100-րդ հոդվածի 1-6-րդ մասերը, 101-103-րդ հոդվածները, ինչպես նաև սույն օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասը, 5-րդ հոդվածը, 6-րդ հոդվածի 1-ին մասը, 8-րդ հոդվածի 2-րդ մասը, 10-րդ հոդվածը, 11-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերը, 12-18-րդ հոդվածները, 19-րդ հոդվածի 1-10-րդ և 12-13-րդ մասերը, 20-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 7-9-րդ մասերը, 21-րդ հոդվածի 1-ին, 3-րդ և 6-րդ մասերը, 49-րդ հոդվածը, 50-րդ հոդվածի 3-րդ մասը, 51-րդ հոդվածը, 52-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերը և 54-րդ հոդվածը տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին վերաբերելի մասով ուժի մեջ են մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող 30-րդ օրվանից:

4. Սույն օրենքը պաշտոնապես հրապարակվելուց հետո՝ մինչև 2022 թվականի հունվարի 1-ը, Կենտրոնական ընտրական հանձնաժողովը սահմանում է Հանձնաժողովի համացանցային կայքի տեխնիկական նկարագիրը և կիրառվող էլեկտրոնային ձևանմուշները:

5. Սույն օրենքը պաշտոնապես հրապարակվելուց հետո՝ մինչև 2022 թվականի հունվարի 1-ը, Կենտրոնական ընտրական հանձնաժողովը մշակում է տեղաշարժման (հենաշարժական) դժվարություններ ունեցող անձանց կողմից իրենց հաշվառման վայրի ընտրողների ցուցակից դուրս գալու և իրենց նախընտրած վայրի ընտրողների ցուցակում ընդգրկվելու մասին դիմումի և տեղեկանքի ձևերը:

6. Սույն օրենքը պաշտոնապես հրապարակվելուց հետո՝ մինչև 2022 թվականի հունվարի 1-ը, լիազոր մարմինը, սույն օրենքի 11-րդ հոդվածի 5-րդ կետին համապատասխան, սահմանում է ընտրողներին քվեարկության օրվա, ընտրական տեղամասի համարի, տեղամասային կենտրոնի հասցեի և ժամանակի մասին ծանուցելու կարգը:

7. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ մինչև 2025 թվականի ~~2024 թվականի~~ հունվարի 1-ը, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը սահմանում է նախընտրական հիմնադրամներ կատարվող նվիրատվությունների և հիմնադրամներից կատարվող ծախսերի հաշվառման կարգը:

8. Սույն օրենքի 20-րդ հոդվածի 4-րդ, 5-րդ, 7-րդ և 8-րդ կետերն ուժի մեջ են մտնում 2025 թվականի ~~2024 թվականի~~ հունվարի 1-ից:

9. Սույն օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ, 4-րդ, 5-րդ կետերն ուժի մեջ են մտնում 2025 թվականի ~~2024 թվականի~~ հունվարի 1-ից:

10. Սույն օրենքի 22-րդ հոդվածն ուժի մեջ է մտնում 2025 թվականի ~~2024 թվականի~~ հունվարի 1-ից:

11. Սույն օրենքը պաշտոնապես հրապարակվելուց հետո՝ մինչև 2022 թվականի հունվարի 1-ը, Կենտրոնական ընտրական հանձնաժողովը սահմանում է դիտորդների, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների հավատարմագրման համար անհրաժեշտ փաստաթղթերի էլեկտրոնային ձևերը և Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքի միջոցով դրանք ներկայացնելու կարգը:

12. Սույն օրենքի 35-րդ հոդվածի 2-րդ կետն ուժի մեջ է մտնում 2023 թվականի հունվարի 1-ից:

13. Սույն օրենքը պաշտոնապես հրապարակվելուց հետո՝ մինչև 2022 թվականի հունվարի 1-ը, Կենտրոնական ընտրական հանձնաժողովը սահմանում է ընտրական հանձնաժողովներ էլեկտրոնային եղանակով դիմումները ներկայացնելու կարգը:

14. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ վեցամսյա ժամկետում, Կենտրոնական ընտրական հանձնաժողովը «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքից բխող իր որոշումները համապատասխանեցնում է սույն օրենքին:

***(104-րդ հոդվածը փոփ. 24.11.22 ՀՕ-443-Ն)***

ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՕՐԵՆՔԸ

## «ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» 2021 թվականի մայիսի 7-ի ՀՕ-208-Ն օրենքի 5-րդ հոդվածի 1-4-րդ մասերում «2024 թվականի» թվերը և բառերը փոխարինել «2025 թվականի» թվերով և բառերով:

**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

## ՏԵՂԵԿԱՆՔ

**(«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքում փոփոխություններ նախատեսող օրենքի նախագծի վերաբերյալ)**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

## Օ Ր Ե Ն Ք Ը

**Ընդունված է 2021 թվականի մայիսի 7-ին**

## «ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 5. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ**

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2025 թվականի ~~2024 թվականի~~ հունվարի 1-ից:

2. Սույն օրենքը պաշտոնապես հրապարակվելուց հետո՝ մինչև 2025 թվականի ~~2024 թվականի~~ հունվարի 1-ը, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը սահմանում է նախընտրական հիմնադրամներ կատարած նվիրատվությունների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագրի ձևանմուշը և հայտարարագիրը կազմելու ու ներկայացնելու կարգի և ժամկետների վերաբերյալ ուղեցույցը:

3. Սույն օրենքը պաշտոնապես հրապարակվելուց հետո՝ մինչև 2025 թվականի ~~2024 թվականի~~ հունվարի 1-ը, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը սահմանում է «Հանրաքվեի մասին» սահմանադրական օրենքով և «Տեղական հանրաքվեի մասին» օրենքով նախատեսված՝ քարոզչության կողմերի կողմից ներկայացվող հայտարարագրերի ձևանմուշը և հայտարարագրերը կազմելու ու ներկայացնելու կարգի և ժամկետների վերաբերյալ ուղեցույցը:

4. Սույն օրենքը պաշտոնապես հրապարակվելուց հետո՝ մինչև 2025 թվականի ~~2024 թվականի~~ հունվարի 1-ը, սույն օրենքի 3-րդ և 4-րդ հոդվածներով նախատեսվող՝ 40.3-րդ և 40.4-րդ հոդվածներից բխող համապատասխան փոփոխություններ են կատարվում «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների փոխանցման կարգը և ձևաչափը հաստատելու մասին»՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի՝ 2020 թվականի հունիսի 12-ի թիվ 91-Ն և Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի՝ 2020 թվականի հունիսի 12-ի թիվ 04-Ն համատեղ որոշման մեջ:

***(5-րդ հոդվածը փոփ. 24.11.22 ՀՕ-446-Ն)***

ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԸ

## «ՀԱՆՐԱՔՎԵԻ ՄԱՍԻՆ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** «Հանրաքվեի մասին» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» 2021 թվականի մայիսի 7-ի ՀՕ-209-Ն սահմանադրական օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասում «2024 թվականի» թիվը և բառը փոխարինել «2025 թվականի» թվով և բառով:

**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ՏԵՂԵԿԱՆՔ**

**(«Հանրաքվեի մասին» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» սահմանադրական օրենքում փոփոխություն նախատեսող սահմանադրական օրենքի նախագծի վերաբերյալ)**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**Ս Ա Հ Մ Ա Ն Ա Դ Ր Ա Կ Ա Ն Օ Ր Ե Ն Ք Ը**

**Ընդունված է 2021 թվականի մայիսի 7-ին**

**«ՀԱՆՐԱՔՎԵԻ ՄԱՍԻՆ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 4.** **Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ**

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2022 թվականի հունվարի 1-ից:

2. Սույն օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ, 4-րդ կետերը, 8-րդ կետը՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին վերաբերելի մասով, 9-րդ և 10-րդ կետերն ուժի մեջ են մտնում 2025 թվականի ~~2024 թվականի~~ հունվարի 1-ից:

***(4-րդ հոդվածը փոփ. 24.11.22 ՀՕ-444-Ն)***

ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՕՐԵՆՔԸ

## «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2021 թվականի մայիսի 7-ի ՀՕ-205-Ն օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասում «2024 թվականի» թիվը և բառը փոխարինել «2025 թվականի» թվով և բառով:

**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՏԵՂԵԿԱՆՔ

(«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքում փոփոխություն նախատեսող օրենքի նախագծի վերաբերյալ)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

**Ընդունված է 2021 թվականի մայիսի 7-ին**

**ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 7. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ**

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2022 թվականի հունվարի 1-ից:
2. Սույն օրենքի 1-ին, 2-րդ, 4-5-րդ հոդվածները, 6-րդ հոդվածի 1-ին և 3-րդ կետերը տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին վերաբերելի մասով ուժի մեջ են մտնում սույն օրենքի պաշտոնական հրապարակման պահից՝ 30 օր հետո:
3. Սույն օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ կետն ուժի մեջ է մտնում 2025 թվականի ~~2024 թվականի~~ հունվարի 1-ից:

ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՕՐԵՆՔԸ

## «ՏԵՂԱԿԱՆ ՀԱՆՐԱՔՎԵԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** «Տեղական հանրաքվեի մասին» օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին» 2021 թվականի մայիսի 7-ի ՀՕ-211-Ն օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերում «2024 թվականի» թվերը և բառերը փոխարինել «2025 թվականի» թվերով և բառերով:

**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ՏԵՂԵԿԱՆՔ**

**(«Տեղական հանրաքվեի մասին» օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին» օրենքում փոփոխություններ նախատեսող օրենքի նախագծի վերաբերյալ)**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**Օ Ր Ե Ն Ք Ը**

**Ընդունված է 2021 թվականի մայիսի 7-ին**

**«ՏԵՂԱԿԱՆ ՀԱՆՐԱՔՎԵԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 3. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ**

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2022 թվականի հունվարի 1-ից:

2. Սույն օրենքի 2-րդ հոդվածի 5-րդ կետը՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին վերաբերելի մասով, ինչպես նաև 9-11-րդ և 13-րդ կետերն ուժի մեջ են մտնում 2025 թվականի ~~2024 թվականի~~ հունվարի 1-ից:

3. Սույն օրենքը պաշտոնապես հրապարակվելուց հետո՝ մինչև 2025 թվականի ~~2024 թվականի~~ հունվարի 1-ը, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը սահմանում է քարոզչության հիմնադրամներ կատարվող նվիրատվությունների և հիմնադրամներից կատարվող ծախսերի հաշվառման կարգը:

***(3-րդ հոդվածը փոփ. 24.11.22 ՀՕ-447-Ն)***

# ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ, «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ, «ՀԱՆՐԱՔՎԵԻ ՄԱՍԻՆ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ, «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ, «ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ, «ՏԵՂԱԿԱՆ ՀԱՆՐԱՔՎԵԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

**1.Կարգավորման ենթակա ոլորտի կամ խնդրի սահմանումը.**

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի (այսուհետ՝ Ընտրական օրենսգիրք) գործող կանոնակարգումների համաձայն Վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունն իրականացնում է նախընտրական հիմնադրամներ կատարվող մուծումների, ծախսերի և դրանց հաշվարկման նկատմամբ վերահսկողություն (29-րդ հոդվածի 1-ին մաս)։ 2021 թվականի մայիսի 7-ին ընդունված «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» սահմանադրական օրենքի 22-րդ հոդվածի համաձայն՝ Ընտրական օրենսգրքի հիշատակված 29-րդ հոդվածի 1-ին մասը փոփոխվում է (ուժի մեջ մտնելու ժամկետ՝ 2024 թվականի հունվարի 1-ը), ինչի արդյունքում վերը նշված գործառույթների իրականացումը վերապահվում է Հայաստանի Հանրապետության Կոռուպցիայի կանխարգելման

հանձնաժողովին:Սակայն, հարկ է նկատել, որ Սահմանադրության 194-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Կենտրոնական ընտրական հանձնաժողովն անկախ պետական մարմին է, որը կազմակերպում է Ազգային ժողովի եւ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները, հանրաքվեները, ինչպես նաև վերահսկողություն է իրականացնում դրանց օրինականության նկատմամբ:»:* Այսպիսով Սահմանադրությունն ընտրական գործընթացի բոլոր փուլերի, այդ թվում՝ նախընտրական քարոզչության, օրինականության նկատմամբ վերահսկողության իրականացման իրավասությունը վերապահել է Կենտրոնական ընտրական հանձնաժողովին:

Ժողովրդավարական երկրներում քաղաքական միավորումների ֆինանսական գործունեության կամ, այլ կերպ ասած, նրանց կողմից ծախսված ռեսուրսների և դրանց ձեռքբերման աղբյուրների մասին հանրությանը իրազեկելու արդարացի և կարևոր պահանջմունք կա: Քաղաքականության համար ծախսվող կապիտալը, որպես կանոն, բաժանվում է երկու հիմնական բաղադրիչի՝

- կուսակցությունների ամենօրյա ֆինանսական գործունեություն,
- ընտրությունների և հանրաքվեների ժամանակ քաղաքական դերակատարների կողմից իրենց մասնակցությունն ապահովելու համար ներգրավվող և ծախսվող ռեսուրսներ:

Մինչև 2011 թվականի Ընտրական օրենսգրքի ընդունումը, որով ստեղծվեց Կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունը, քաղաքականության համար ծախսվող ռեսուրսների նկատմամբ վերահսկողությունն իրականացվել է երկու տարբեր ինստիտուցիոնալ կառույցների կողմից, և կուսակցությունների ընթացիկ ֆինանսական գործունեության նկատմամբ վերահսկողությունը դուրս էր ընտրական մարմինների, մասնավորապես՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կամ նրա կողմից ստեղծված որևէ մարմնի իրավասությունից և իրականացվում էր Արդարադատության նախարարության կազմում գործող տեսչական մարմնի կողմից:

Մյուս բաղադրիչի՝ ընտրությունների և հանրաքվեների մասնակցության ընթացքում քարոզարշավի համար ծախսվող ռեսուրսների վերահսկողությունն ի սկզբանե եղել է ընտրական հանձնաժողովների լիազորությունների շրջանակներում,

ինչը տրամաբանական է, քանզի ընտրական մարմինները պատասխանատու են ընտրությունների և հանրաքվեների կազմակերպման համար: Քարոզարշավը հանդիսանում է ընտրությունների և հանրաքվեների բաղկացուցիչ և անբաժան մասը, և քարոզչության նկատմամբ վերահսկողությունը, անկասկած, իր մեջ ներառում է քարոզչության համար ծախսվող գումարների նկատմամբ վերահսկողությունը: Կենտրոնական ընտրական հանձնաժողովն ընտրությունների և հանրաքվեների քարոզարշավի ժամանակ պարտավոր է իրականացնել քարոզչության նկատմամբ վերհսկողություն, որն իր մեջ ներառում է թե ընթացիկ վերահսկողությունը, թե այս կամ այն խախտման վերաբերյալ վերջնական գնահատական տալը, ինչպես նաև գնահատականն առ այն, թե որքանով է այդ խախտումն ազդել կամ կարող էր ազդել ընտրությունների արդյունքների վրա:

Քարոզչության համար ծախսվող գումարների նկատմամբ պետական վերահսկողության ինստիտուտի առկայությունը պահանջում է մասնագիտական և արդյունավետ գործունեություն՝ այդ վերահսկողության շրջանակներում հետապնդվող նպատակներին հասնելու համար: Այս տեսանկյունից մասնագիտական և արդյունավետ գործունեություն իրականացնելու համար անհրաժեշտ է ունենալ մասնագիտացված կառույց, որն իր իրավակիրառական պրակտիկայում կձևավորի կայուն գործելակերպ, իրավական դիրքորոշումներ և տեսակետներ, կկատարի ձեռք բերված տեղեկությունների վերլուծություն, կամփոփի պրակտիկան և կառաջարկի նոր մոտեցումներ և լուծումներ՝ ոլորտում առկա խնդիրների հաղթահարման համար: Վերոշարադրվածի լույսի ներքո Վերահսկիչ-վերստուգիչ ծառայության ստեղծումը և նրան բավարար անկախություն տրամադրելը, ծառայության ղեկավարի ապաքաղաքական լինելու պահանջ սահմանելը կարելի համարել հաջողված փորձ: Այն նաև դրական է ընդունվել Եվրոպայի խորհրդի Կոռուպցիայի դեմ պայքարող պետությունների խմբի (ԳՐԵԿՈ) կողմից, որն իր 2014 թվականի Հայաստանի պարտավորությունների կատարման վերաբերյալ երկրորդ զեկույցի Գնահատման մեջ՝ կուսակցությունների ֆինանսավորման թափանցիկության կապակցությամբ նշել է, որ ընդունվում է, որ իշխանությունների կողմից ձեռնարկվել են մի քանի միջոցառումներ, այդ թվում՝ Վերահսկիչ-վերստուգիչ ծառայության ստեղծումը (Հայաստանի

պարտավորությունների կատարման վերաբերյալ երկրորդ զեկույցի Գնահատման երրորդ փուլ, կետ 13) ։

Ընտրական օրենսգրքում ամրագրված կանոնակարգումների համաձայն, Վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունն իրականացնում է **նախընտրական հիմնադրամներ** կատարվող մուծումների, ծախսերի և դրանց հաշվարկման նկատմամբ վերահսկողություն: Նշված կանոնակարգումն ուժի մեջ է մտել 2022 թվականի հունվարի 1-ից, իսկ մինչ այդ ժամկետը Վերահսկիչ-վերստուգիչ ծառայության ստեղծման պահից սկսած՝ այն իրականացնում էր նաև կուսակցությունների ընթացիկ ֆինանսական գործունեության նկատմամբ վերահսկողություն, որը 2022 թվականի հունվարի 1-ից վերապահվեց Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին: Այսպիսով, եթե նախկինում կուսակցությունների ֆինանսական գործունեության նկատմամբ վերահսկողությունն ամբողջությամբ վերապահված էր միայն մեկ մարմնի, ապա այս պահին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսվել են քաղաքականության համար ծախսվող կապիտալի երկու հիմնական բաղադրիչների նկատմամբ վերահսկողություն իրականացնող **երկու տարբեր ինստիտուցիոնալ կառույցներ**՝ տարանջատելով կուսակցությունների ընթացիկ ֆինանսական գործունեության նկատմամբ վերահսկողությունը ընտրությունների և հանրաքվեների ժամանակ քաղաքական դերակատարների կողմից նախընտրական քարոզչության համար կատարվող ծախսերի նկատմամբ վերահսկողությունից: 2024 թվականի հունվարի 1-ից նախատեսվում է կուսակցությունների ֆինանսական գործունեության նկատմամբ վերահսկողության մեկ միասնական ինստիտուցիոնալ կառույց՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին նախատեսելը: Սակայն, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին վերոնշյալ գործառույթները վերապահելը կարող է գործառնական առումով հանգեցնել սահմանադրականության հետ կապված խնդիրների՝ հաշվի առնելով արդեն իսկ շեշտված հանգամանքը, որ Սահմանադրության համաձայն՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովն անկախ պետական մարմին է, որը կազմակերպում է Ազգային ժողովի և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները, հանրաքվեները, ինչպես նաև վերահսկողություն է իրականացնում դրանց օրինականության նկատմամբ:

Անվիճելի է, որ ընտրական գործընթացի մաս է կազմում նախընտրական քարոզչությունը, որի վերաբերյալ օրենսդրորեն սահմանված են նախընտրական քարոզչության կարգը և նախընտրական քարոզչության նախապատրաստման, կազմակերպման և իրականացման ֆինանսավորման կանոնները: Ընտրական գործընթացի տվյալ փուլի՝ նախընտրական քարոզչության օրինականության նկատմամբ վերահսկողության իրականացումը, ըստ էության, հանգում է ընտրություններին մասնակցող կուսակցությունների, թեկնածուների կողմից նախընտրական քարոզչությունը օրենքով սահմանված կարգին և ֆինանսավորման կանոններին համապատասխան իրականացումն ապահովելուն կամ խախտումները կանխելուն, խախտումն կատարելու դեպքում՝ բացասական հետևանքները վերացնելուն և ըստ անհրաժեշտության սանկցիաներ կիրառելուն: Ընդ որում, հենց նախընտրական քարոզչությանն առնչվող խախտումների հիմքով է հնարավոր ընտրական գործընթացի հիմնական սուբյեկտների՝ ընտրություններին մասնակցող կուսակցությունների, թեկնածուների նկատմամբ կիրառել բավականին խիստ միջոց՝ դիմել դատարան թեկնածուի, ընտրություններին մասնակցող կուսակցության ընտրական ցուցակի գրանցումն ուժը կորցրած ճանաչելու համար: Գործնականում ընտրությունների և հանրաքվեների քարոզչության ֆինանսավորման նկատմամբ վերահսկողության իրականացումն առանց նախընտրական քարոզչության կարգի նկատմամբ (վերահսկողության) հսկողության հնարավոր չէ:

**2. Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը.**

Առաջարկվող օրենսդրական փոփոխությունների անհրաժեշտությունը պայմանավորված է կիրառվելիք օրենսդրական կարգավորումների սահմանադրականության վերաբերյալ մտահոգություններով:

Նշված խնդրի կապակցությամբ քննարկումները ներկայումս շարունակվում են: Առաջիկայում նախատեսվում են ընտրական օրենսդրության լայնածավալ բարեփոխումներ, ուստի, առաջարկում ենք հետաձգել 2021 թվականի մայիսիս 7-ի «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» սահմանադրական

օրենքի 22-րդ հոդվածի և հարակից օրենքներում կատարված համապատասխան փոփոխությունների ուժի մեջ մտնելու ժամկետը և վկայակոչված իրավահարաբերություններին և դրանցից բխող խնդիրներին վերջնական լուծում տալ ընտրական օրենսդրության նշված բարեփոխումների շրջանակներում:

**3. Կարգավորման նպատակը, ակնկալվող արդյունքները.**

Ներկայացված օրենսդրական փաթեթի նպատակն է ապահովել գործող կանոնակարգերի պահպանումն առ այն, որ 2024 թականի հունվարի 1-ից հետո ևս ընթացիկ գործունեության ֆինանսավորման նկատմամբ վերհսկողությունն իրականացվի Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից, իսկ նախընտրական քարոզչության ֆինանսավորման նկատմամբ վերահսկողությունը՝ վերահսկիչ-վերստուգիչ ծառայության կողմից՝ երկարացնելով գործող կանոնակարգումները մինչև 2025 թվականի հունվարի 1-ը՝ մինչ քաղաքական միավորումների ֆինանսական գործունեության նմատմամբ վերահսկման իրավահարաբերությունների և դրանցից բխող խնդիրներին վերջնական լուծման համար նոր համակարգային մոդելի նախատեսումը: